ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1964 Общественные науки

Վ. Ա. Բաբուրգյան

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԸ ԵՎ ԿԱԹՈԼԻԿ ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.

17-րդ դարում Արևելքի[1] երկրներում պայքարը եվրոպական գաղութարարների միջև սկսում է կրել առավել սուր բնույթ։ Այդ պայքարի ասպարեզներից մեկն է դառնում նաև Իրանը, որը եվրոպական պետությունների կողմից դիտվում էր որպես ոչ միայն լուրջ ռազմական և քաղաքական գործոն, Եվրոպային սպառնացող թուրքական վտանգը դիմագրավելու համար, այլև որպես Հնդկաստան տանող առևտրական ճանապարհների վրա ընկած և եվրոպական մանուֆակտուրաների համար առատ հումք մատակարարող երկիր։ Կանխելով միմյանց, եվրոպական պետությունները եռանդուն ջանքեր էին գործադրում կապիտուլյացիոն պայմանագրերի և սեֆևյան շահերից ստացած զանազան արտոնագրերի միջոցով թափանցել Իրան և այն ամբողջապես ենթարկել իրենց քաղաքական և տնտեսական ազդեցությանը։ Այդ գործում հատկապես մեծ դեր էին խաղում եվրոպական կաթոլիկական միսիոներները, որոնք կրոնի քարոզության անվան տակ թափանցելով Իրան, իրականում հետապնդում էին քաղաքական նպատակներ[2]։ Նրանք հող էին նախապատրաստում եվրոպական առևտրական կապիտալի տիրապետության համար Իրանում և աշխատում էին պայմաններ ստեղծել իրենց պետությունների գաղութային քաղաքականության իրականացման համար։ Հաստատվելով Իրանում և սեֆևյան շահերից ստանալով մի շարք արտոնություններ, կաթոլիկ եկեղեցին բացառիկ մեծ դեր խաղաց Իրանում արևմտաեվրոպական գաղութարարների օգտին կապիտուլյացիոն ռեժիմ սահմանելու գործում[2]։

Իրան ժամանող միսիոներները պատկանում էին տարբեր կրոնական միաբանությունների և արտահայտում էին տարբեր եվրոպական պետությունների շահերը։ Եվրոպական միապետներից և Հռոմի պապից բերած նրանց նամակներում հիմնականում արծարծվում էին հակաթուրքական դաշինք կնքելու, Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու, եվրոպական երկրներին առևտրի բնագավառում արտոնություններ տրամադրելու և Սեֆևյան պետության քրիստոնյա բնակչությանը «հովանավորելու» հարցերը[3]։

Հռոմի հատուկ ուշադրությանն են արժանանում հայերը, որոնք կազմում

---

[1] کاظم صدر، تاریخ سیاست خارجی ایران. طهران. 1943، ص 60.

پناهیان محمود فرزند غلامحسین. دربارهٔ رژیم کاپیتولاسیون در ایران. مسکو، 1962، ص 142 (Թեկնած. դիսերտ.)

[2] Berthold (Ignace de Ste-Anne), Histoire de l'etablissement de la mission de Perse par les peres Carmes dechausses, Bruxelles, 1885, p. p. 246—247.

էին Սեֆևյան պետության քրիստոնյա բնակչության մեծամասնությունը[4]։ Միսիոներներն իրենց ուշադրությունը հատկապես կենտրոնացնում էին Նոր Ջուղայի հայության վրա[5]։ Այդ պատահական չէր. Նոր Ջուղայի հայ առևտրական կապիտալը սկսում էր աչքի ընկնող դեր խաղալ Իրանի տնտեսական կյանքում՝ իր ձեռքում կենտրոնացնելով Իրանի արտաքին առևտրի նշանակալից մասը և միաժամանակ հանդես գալով իրանա-եվրոպական առևտրի միջնորդի դերում։ Նոր Ջուղան հանդիսանում էր նաև լուսավորչական եկեղեցու թեմական կենտրոնը իրանահայ գաղութում և որպես այդպիսին նշանակալից դեր էր խաղում իրանահայերի հասարակական-կրոնական կյանքում։ Միսիոներները հասկանում էին, որ իրանահայերին կաթոլիկ եկեղեցու կողմը գրավելու համար առաջին հերթին հարկավոր է հարված հասցնել լուսավորչական եկեղեցու այդ հենարանին։ Այդ իսկ պատճառով կաթոլիկ միսիոներությունը այստեղ հանդես էր գալիս ավելի մեծ ակտիվությամբ։

Հռոմի հանձնարարությամբ միսիոներները մեծ եռանդով ձեռնամուխ են լինում Նոր Ջուղայի հայերի վիճակի ուսումնասիրմանը և իրենց դիտումների մանրամասն հաշվետվությունները պարբերաբար հաղորդում են Հռոմ[6]։ Դա անհրաժեշտ էր վերջինիս՝ մշակելու համար միսիոներների գործունեության մանրամասն պլան ջուղայահայ բնակչության մեջ։

Հայ բնակչության ամենատարբեր խավերի հետ լայն շփում ունենալու և նրանց համակրանքը շահելու համար, որպես կանոն, միսիոներներն ունենում էին այս կամ այն օգտակար մասնագիտությունը[7]։ Կաթոլիկ-քարոզիչները դիմում էին նաև մի այլ փորձված միջոցի։ Նրանք աշխատում էին օգտագործել սոցիալական ներհակությունները ժողովրդի տարբեր խավերի մեջ և ճիգ էին անում դժգոհ տարրերին գրավել իրենց կողմը[8]։

Միսիոներներն առանձնակի եռանդ էին ցուցաբերում Նոր Ջուղայի առևտրական կապիտալի ներկայացուցիչներին դավանափոխ անելու և կամ գոնե նրանց լոյալ վերաբերմունքը ձեռք բերելու գործում։ Սերտ առևտրական կապեր ունենալով Եվրոպայի հետ, Ջուղայի առևտրական դասը ստիպված էր բացահայտ թշնամական դիրք չբռնել կաթոլիկ միսիոներների հանդեպ, որովհետև դա սպառնալիք կարող էր ստեղծել իրենց առևտրական գործերին Եվրոպայում։ Մյուս կողմից, Ջուղայի խոջայությունը միսիոներների նկատմամբ իր վերաբերմունքը ստիպված էր համակերպել պարսկական կառավարության եվրոպական պետությունների նկատմամբ բռնած դիրքի համեմատ։ Շարդենը այդ առթիվ նշում է, որ «Հայերը կաթոլիկներին հարգում էին այնքան ժամանակ, որքան պարսկական կառավարությունը հարգում էր եվրոպացիներին»[9]։

Կաթոլիկ միսիոներների նամակագրությունից, Հռոմի պապի և իրենց ղեկավարների հետ, ակնառու կերպով երևում է, որ ջուղայեցի հայ խոջաները սկզբունքորեն դեմ լինելով կաթոլիկներին, առերես բարեկամական վերաբերմունք էին ցույց տալիս նրանց, ելնելով իրենց նեղ առևտրական շահերից։

---

[4] A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII and XVIII centuries", London. 1939, vol. I, p. 158.

[5] Ibid, II, p. 1072.

[6] Ibid, I, p. 157.

[7] Հայկ Ահեմյան, Նոր Ջուղայի հայոց գերեզմանատան լատիներեն հին տապանագիրները («Բազմավեպ»), 1944, № 1—6, էջ 42—43։

[8] Արտ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1. Երևան, 1956, էջ 114։

[9] Chardin, Jean de, Voyage en Perse, ed. Langles, Paris, 1811, t. VIII, p. 110.

Բնական է, որ եվրոպական պետությունների ներկայացուցիչների՝ միսիոներների նկատմամբ Ջուղայի վաճառականության բացահայտ թշնամական դիրք գրավելու դեպքում, Եվրոպայում նրանց առևտուրը կարող էր կրել մեծամեծ վնասներ։ Իսկ դա, իր հերթին, շոշափելի հարված կհասցներ Իրանի արտաքին առևտրին, որի մեծ մասը գտնվում էր ջուղայահայ վաճառականների ձեռքին, մի բան, որը տեղիք կտար պարսկական կառավարության դժգոհությանը։ Այս նկատառումներից ելնելով Ջուղայի վաճառականությունը իր համոզմունքներին հակառակ, ոչ միայն համակրական վերաբերմունք էր ցույց տալիս կաթոլիկ քարոզիչների հանդեպ, այլև գործնականապես օգնում էր նրանց Ջուղայում և Սպահանում հաստատվելու և եկեղեցիներ ու դպրոցներ բաց անելու գործում։ Միսիոներների Հռոմ գրած նամակներում մենք հանդիպում ենք բազմաթիվ դրվատական խոսքերի Ջուղայի առևտրական կապիտալի ներկայացուցիչների հասցեին։ Այսպես՝ 1629 թ. օգոստոսին Հռոմի Ս. Ժողովը Ֆրանսիայի նվիրակի միջոցով Խոջա Նազարին է հղում մի շնորհակալագիր, այն աջակցության համար, որ նա ցույց է տալիս կապուչինյան միաբանության անդամներին։ Միաժամանակ առաջարկում է նրան, որ եթե առաջիկայում պատահեն առիթներ, նա չզլանա օգնել նրանց, հավատացած լինելով, որ որպես փոխադարձ վարձատրություն կարժանանա առաքելական Ս. աթոռի հիշատակարանի մեջ անմոռաց դառնալու պատվին[10]։ Մի այլ նամակով, գրված 1633 թ. հունվարի 5-ին, Հռոմը այս անգամ քարմելիթների անունից իր երախտագիտության խոսքն էր ասում Խոջա Նազարին, հիշյալ միաբանության միսիոներների նկատմամբ նրա արած շնորհների և օգնության համար[11]։

Ավելի ուշ նման քաղաքականություն կաթոլիկ քարոզիչների նկատմամբ վարում է նաև Նոր Ջուղայի ազդեցիկ խոջաներից մեկ ուրիշը՝ Խոջա Սարֆրազը։ Այդ երևում է Քարմելիթ Բալթազարի 1653 թ. Սպահանից Հռոմին հասցեագրված նամակից. «Այստեղ մենք շատ լավ հարաբերությունների մեջ ենք Սարֆրազ անունով Ջուղայի քալանթարի հետ։ Նա մեծ բարիքներ է անում պապին և քարմելիթյան հայերին»[12]։

Հայ երեխաներին կաթոլիկական ոգով դաստիարակելու համար միսիոներները աշխատում էին Նոր Ջուղայում բաց անել դպրոցներ։ Խոսելով այդպիսի դպրոցների նպատակի և նրանց կարևոր դերի մասին, Ջոն Թագդեուսը Հռոմ գրած նամակներից մեկում գրում է. «Մենք կարծում ենք, որ այս երկրում ձեռք կբերեինք ավելի մեծ արդյունքներ, եթե լիներ մի դպրոց հայ երեխաների համար։ Դա անհրաժեշտ է, որովհետև նրանց կարող ենք մեզ մոտ սովորեցնել մեր կանոնները, որից հետո կարելի կլինի նրանց ուղարկել Հռոմ, որտեղ ավելի բարձր կրթություն ստանալով կվերադառնան հայրենիք՝ ծառայելու ի փառս աստծո»[13]։

Քարմելիթներին հաջողվում է Շիրազում և Սպահանում բաց անել դպրոցներ։ Նույնանման մի դպրոց նրանք բաց են անում նաև Նոր Ջուղայում, բացառապես հայ երեխաների համար[14]։

---

10 «Հանդէս ամսօրեայ», 1933, № 7—8, էջ 384—386։

11 Նույն տեղում։

12 A Chronicle..., I, p. 378.

13 A Chronicle..., I, p. 192.

14 Նույնը, 1, էջ 319, 445, 484 և նույնը, 2, էջ 1080, 1082։

Խոջա Նազարը լինում է առաջիններից մեկը, որն իր որդուն հանձնում է քարմելիթներին՝ նրանց մոտ կրթություն ստանալու և եվրոպական լեզուներ սովորելու համար[15]։ Բնական է, որ նրա այդօրինակ վարմունքը վարակիչ օրինակ էր հանդիսանալու նաև ուրիշների համար։

Հռոմին գոհացնելու համար հայ խոջաները կաթոլիկություն ընդունած խոջաների հետ համատեղ համաձայնություն էին տվել ֆինանսավորել հայ երեխաների համար Հռոմում բացվելիք դպրոցը։ Դա լինելու էր տեղական բնակիչներից կաթոլիկ քարոզիչների պատրաստման մի դարբնոց, որի շրջանավարտները վերադառնալու էին հայրենիք՝ իրենց հայրենակիցների մեջ կաթոլիկություն քարոզելու համար։ Սակայն միսիոներներին մատուցած իրենց ծառայությունների փոխարեն խոջաներն աշխատում էին ստանալ փոխհատուցում։

Խոջա Նազարը քարմելիթյան կրոնավոր Թադդեուսի միջոցով, որ 1629 թ. պատրաստվում էր Հռոմ մեկնել, հայ վաճառականների անունից խնդրում է, որ Հռոմի պապը աջակցի, որպեսզի հայ վաճառականներին շնորհվեն քահանայապետական պետության և ուրիշ քրիստոնյա երկրների մեջ կայաններ, ուր նրանք կարողանային արտահանել իրենց ապրանքները առանց մաքսավճարումների[16]։

Հռոմը, իհարկե, հեշտությամբ չէր բավարարելու հայ խոջաների խնդիրքը։ Ի պատասխան Խոջա Նազարի խնդիրքի, «Պրոպագանդայի ժողովը» պատասխանում է, որ այդպիսի թույլտվություն նա կարող է տալ միայն Նոր Ջուղայի այն առևտրականներին, որոնք հարում են կաթոլիկ եկեղեցուն։ Պատասխանը միանգամայն համապատասխանում էր Հռոմի վարած քաղաքականության ոգուն, այն է՝ արևմուտքից որևէ պաշտպանություն և օժանդակություն ստանալու անհրաժեշտ պայմանը՝ պապության հպատակությունն է[17]։ Սակայն կաթոլիկ եկեղեցու հիշյալ սկզբունքը չէր ենթադրում, որ պետք է բոլոր հարցերում անհաշտ դիրք բռնել ոչ կաթոլիկ կամ կաթոլիկությունն ընդունել չցանկացող հայ խոջաների նկատմամբ։ Քաջ ծանոթ լինելով հայ խոջայության ունեցած դիրքի և ազդեցության հետ Իրանի գաղութում և հայ հոգևորականության վրա, նրանք պարզապես չէին կարող հաշվի չնստել նրա շահերի հետ, որովհետև հակառակ դեպքում իրենց քարոզչական գործը վտանգի տակ կդնեին ոչ միայն Նոր Ջուղայում, այլև Իրանի այլ հայաշատ կենտրոններում։ Այդ պատճառով հարուստ և ազդեցիկ խոջաների համակրանքը շահելու և նրանց դիրքն ու ազդեցությունը իրենց գործի հաջողությանը ծառայեցնելու համար միսիոներներն իրենց հերթին նրանց մեծ ու փոքր ծառայություններ էին մատուցում։ Այսպես, եվրոպական երկրների հետ իրենց ունեցած սերտ կապի շնորհիվ, նրանք այս կամ այն երկրում խոջաների ապրանքի վաճառքից ստացված գումարը բերում հասցնում էին նրանց։ Եվ դա նրանք անում էին այնպիսի ճշտապահությամբ և ազնվությամբ, որ առաջ էին բերում խոջաների գոհունակությունը։ Բացի այդ, նրանք թարգմանում էին խոջաների առևտրական կամ պայմանագրային փաստաթղթերը, եվրոպական երկրնե-

15 Նույնը, 1, էջ 318—319։

16 «Հանդես ամսօրեայ», 1934, էջ 514 և հտ.։

17 Մ ա ղ ա ք ի ա ա ր ք ե պ. Օ ր մ ա ն ե ա ն, Հայոց եկեղեցին և իր պատմությունը, վարդապետությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, դրականությունը ու ներկայ կացությունը, Կոստանդնուպոլիս, 1911, էջ 106։

րից ստացված կամ ուղարկվելիք նամակները, Եվրոպայում նրանց համար որոնում էին նորանոր կոնտրագենտներ, որով է՛լ ավելի էին ընդլայնում նրանց առևտրական կապերը եվրոպական երկրների հետ[18]։

Երբեմն Եվրոպայում Ջուղայեցի վաճառականներին, որպես լուսավորչական եկեղեցու հետևորդների, վերաբերվում էին որոշ կասկածանքով, ինչպես սովորաբար ընդունված էր վերաբերվել «հերետիկոսների» և «անհավատների» նկատմամբ։ Այդ անցանկալի վերաբերմունքից խուսափելու համար խոջաները ստիպված էին հանձնարարական նամակներ վերցնել Նոր Ջուղայում և Սպահանում գործող միսիոներներից, դա նրանց մեծապես օգնում էր Եվրոպայում հաջող առևտրական գործարքներ կատարելու[19]։ Խոջաները օգտվում էին նաև միսիոներների միջնորդությունից՝ Եվրոպայում այս կամ այն հանցանքի կամ օրինազանցության պատճառով դատապարտված իրենց ընկերներին ազատելու համար[20]։

Լավ գիտակցելով, որ իրենց գործի հաջողությունը միայն հայ խոջաների վերաբերմունքից չի կախված, այլ նաև պարսկական կառավարության բռնած դիրքից՝ դեպի կաթոլիկ պրոպագանդը, միսիոներները ջանում էին որոշ ծառայություններ մատուցել նաև պարսկական կառավարությանը։ Այսպես, օրինակ, հայ խոջաների անունից միսիոներները խնդրում են պապին ճնշում գործ դնել Իսպանիայի թագավորի վրա, վերջ տալու համար փորթուգալացիների անկարգություններին Հորմուզում[21]։ Այս դիպուկ քայլով նրանք ոչ միայն խոջաներին, այլև պարսկական կառավարությանը գոհունակություն էին պատճառում։

Սակայն, նման օգտակար ծառայությունների միջոցով հայ առևտրական դասի համակրանքը շահելու քաղաքականությունը ոչ միշտ էր, որ տալիս էր ցանկալի արդյունք։ Այդպիսի դեպքերում միսիոներները դիմում էին ավելի կտրուկ միջոցների։ Նրանք իրենց նկատմամբ թշնամական ու անհաշտ դիրք բռնած վաճառականների գիմադրությունը աշխատում էին կոտրել դիպչելով նրանց ամենախոցելի տեղին՝ առևտրական շահերին։ Անհրաժեշտ դեպքում հաճախ դիմում էին եվրոպական կաթոլիկական երկրների կառավարություններին, որպեսզի վերջիններս ճնշում գործադրեն իրենց երկրներում առևտուր անող ջուղայեցի վաճառականների վրա։ Նրանց այդ պահանջը սիրով կատարվում էր։ Առանց որևէ լուրջ պատճառի, հաճախ, Եվրոպայում, տուգանքի էին ենթարկում հայ խոջաներին, անօրինական ճանապարհով նրանցից վերցնում էին լրացուցիչ մաքս, արգելակում էին կամ արհեստականորեն ձգձգում ապրանքների վաճառքը և այլն[22]։ Երբեմն նույնիսկ հայ խոջաներին արգելում էին մուտք գործել եվրոպական կաթոլիկական երկրները, լավագույն դեպքում բռնագրավում էին նրանց ապրանքները, կալանք էին դնում դրանք տեղափոխող նավերի վրա[23] և այլն։

Ջուղայում մեծ խռովություններ ծագելու և կաթոլիկների նկատմամբ հալածանքներ սկսվելու դեպքում անմիջապես Հռոմ և եվրոպական կաթո-

---

[18] A Chronicle..., I, p. p. 295, 375, 378, 505; II, p. 1073.
[19] Ibid, I, p. 318.
[20] A Chronicle..., II, p. 1074.
[21] Ibid, I, p. 141.
[22] A Chronicle..., I, p. p. 439, 461, 169, 475, 493, 632; II, p. 1074.
[23] Ibid, I, p. p. 506, 510.

լիկական երկրներ էին թուչում միսիոներների ապտնապալից նամակները՝ օգնության աղերսով։ Դրանցում առաջարկվում էր պատասխան միջոցներ ձեռ առնել Եվրոպայի հայկական գաղութներում բնակվող հայության և հատկապես Ջուղայի առևտրական ներկայացուցիչների նկատմամբ։

Այսպես՝ Ավգուստինյան միաբանության անդամ Ջոզեֆ դե Լոզարիոն Սպահանից «Հավատի պրոպագանդային» 1644-ի ապրիլի 3-ին իր գրած նամակով հայտնում է. «Մենք մշտապես տառապում ենք հայերի հալածանքներից, որի հետևանքով միսիոներների վտարումը այս շրջանից միշտ պետք է աչքի առաջ ունենալ։ Եթե բոլոր նրանց դեմ (խոսքը հայերի մասին է—Վ. Բ.), ովքեր ապրում են կաթոլիկական երկրներում գործադրվեն սպառնալիքներ, ապա թերևս հնարավոր կլինի, որ մենք այստեղ ազատ լինենք»[24]։

1694 թ. Նոր Ջուղայում կաթոլիկների և լուսավորչականների մեջ ծագած մեծ խռովության ժամանակ կաթոլիկ եպիսկոպոս Պիդոն Ջուղայում գործող բոլոր կաթոլիկական միաբանությունների միսիոներներին շտապ կարգով հավաքում է ընդհանուր խորհրդակցության, որտեղ որոշում են ստորագրել մի դիմում եվրոպական քրիստոնեական թագավորների անունով, որպեսզի վերջիններս օգնեն իրենց և զսպեն ջուղայեցիների «սանձարձակությունները», կալանքի ենթարկելով նրանց ապրանքները թե՛ ծովում և թե՛ ցամաքում[25]։

Այս դիմումներին անմիջապես ընթացք էին տրվում և նույնիսկ մշակվում էին հատուկ միջոցառումներ։ Օրինակ՝ Քարմելիթ Դիոնիսիուսը «Հավատի միաբանության» քարտուղարությանը ներկայացնում էր մի առաջարկ, ըստ որի Եվրոպայում հայերի նկատմամբ հալածանքներ սկսելը դիտվում էր որպես Նոր Ջուղայում նրանց հայրենակիցներին զսպելու հնարավոր միջոցներից մեկը։

Սակայն ոչ միշտ էին այդօրինակ հալածանքները հայ խոջաների նկատմամբ սպասված արդյունքի հասցնում։ Հաճախ, ընդհակառակն, Եվրոպայում բախվելով իրենց ազգային ու կրոնական զգացմունքների ոտնահարման փաստերի հետ և ենթարկվելով անօրինական հալածանքների, նրանք էլ ավելի մեծ թշնամանքով էին լցվում կաթոլիկների հանդեպ։ Այդ մասին է վկայում Նախիջևանի կաթոլիկների եպիսկոպոս Փիրոմալիի նամակը՝ ուղղված Հռոմին, որտեղ նա ահազանգում է, որ «այն վաճառականները, որոնք իրենց առևտրական գործերով եղել են Եվրոպայում, ավելի համառ և եռանդագին դիմադրություն են ցույց տալիս միավորման գաղափարին և առավել մեծ եռանդով են աշխատում ժողովրդի մեջ հարուցել զզվանք դեպի Հռոմը»[26]։

Այսպիսով, եթե մի կողմից հայ խոջայության զգալի մասը ելնելով իր առևտրական շահերից, աշխատում էր բարեկամական կապեր պահպանել հռոմեական եկեղեցու հետ, երբեմն նույնիսկ աջակցելով նրան, մյուս կողմից, սակայն, նա աշխատում էր ետ պահել գաղութի լուսավորչական հայությանը կաթոլիկներին հարելու և կամ նրանց նկատմամբ համակրանք տածելու ձգտումից։ Պարսկահպատակ և իր շահերով առավել կաթոլիկներից ավելի պարսկական կառավարության հետ կապված լինելով, հայ խոջայությունը, բնականաբար, աշխատում էր կասկածի չենթարկել միսիոներների և կաթոլիկ երկրների հետ իր ունեցած կապերը։

[24] Ibid, I, p. 375.
[25] A Chronicle..., I, p. 375.
[26] A Chronicle..., I, p. 375.

Անդրադառնալով հայ խոջայության այդ երկդիմի վերաբերմունքին, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը նկատում է. «Պապական ծուղակի մեջ հեշտ ընկնողներից չէին Նոր ջուղայեցիները։ Բարի հարաբերությունների մեջ մտնել Հռոմի հետ՝ այդ կնպաստեր նրանց շահաստացությանը, բայց հպատակվել Հռոմին՝ կնշանակեր գժտվել Իրանի հետ»[27]։ Իր նկատմամբ կառավարության կասկածանքը հարուցելու դեպքում, հայ խոջայությունը ոչ միայն կարող էր զրկվել իր ամբողջ ունեցվածքից, այլև ենթարկվել բռնի մահմեդականացման։ Իսկ այդպիսի փաստերը քիչ չէին նույնիսկ Աբբաս 1-ի օրոք[28]։ Անշուշտ այս հանգամանքը լավ հասկանում էին նաև միսիոներները։ Այսպես, Դիոնիսիուսը 1642 թ. տեղեկագրում էր Հռոմ, որ «Նոր Ջուղայի ամենահարուստ հայերը, որոնք ի վիճակի են մեծ օգնություն ցուցաբերել մեզ, հանդիսանում են միաժամանակ ամենավախկոտները, որովհետև չափազանց շատ բան ունեն, որից կարող են զրկվել»[29]։

Նոր Ջուղայում կաթոլիկ միսիոներների ասիմիլյատորական մտադրությունների իրականացման ճանապարհին զորեղ խոչընդոտ էր հանդիսանում գաղութի հայկական լուսավորչական հոգևորականությունը։ Եվ այդ հասկանալի է. միսիոներների բուռն գործունեությունը գաղութի հայության մեջ սպառնալիքի տակ էր դնում ոչ միայն նրա դիրքն ու ազդեցությունը, այլև իր գոյությունը։ Ձգանկանալով զրկվել իր հոտից, նա անհաշտ պայքարի է նետվում քարոզիչների դեմ։ Հռոմի պապին և իրենց անմիջական ղեկավարներին ուղղված միսիոներների շատ նամակներում տագնապով է արտահայտվում հայ հոգևորականության դիմադրության և իրենց նկատմամբ հալածանքներ կիրառելու առթիվ։ Օրինակ՝ Քարմելիթ Ֆելիքսը խոսելով հայերի մեջ քարոզչական աշխատանքի վատ վիճակի մասին, իրենց անհաջողությունների հիմնական պատճառը համարում էր «հայ եպիսկոպոսների և հոգևորականության մեծ դիմադրությունը»[30]։

Վատիկանի համար պարզ էր, որ հայ ժողովրդին կաթոլիկության մեջ ներգրավելու գործը հեշտացնելու համար նախ պետք է ընկճել նրա եկեղեցու և հոգևորականության դիմադրությունը։ Միսիոներների միջոցով Վատիկանը մանրամասն տեղեկություն էր ստանում հայ հոգևորականության նկատմամբ պարսկական կառավարության (հատկապես վերջին սեֆևիների օրոք) գործադրված հալածանքների և նրա վրա դրված ծանր հարկերի մասին։ Օգտվելով դրանից, նա աշխատում էր հայ հոգևորականության մեջ այն կարծիքն ստեղծել, թե իր այդ խղճուկ և ծանր վիճակից դուրս գալու միակ ելքը Հռոմի ամենազոր աթոռի հետ միանալն է։

Հայ եկեղեցին իր ազդեցությանը ենթարկելու արդյունավետ միջոցներից մեկը Վատիկանը համարում էր հայ բարձր հոգևորականությանը, առաջին հերթին՝ իրեն կաթողիկոսին, կաթոլիկության գիրկը գրավելը, որպեսզի պատրիարքական աթոռին տիրանալով ժողովրդին պարտադրի իր դոգմաները։ Այդ

---

27 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2-րդ, Երևան, 1959, էջ 107։

28 نصر اله فلسفی، : زندگانی شاه‌عباس اول، جلد سوم، طهران، 1336 ص 233—235.

29 A Chronicle..., II, p. 1072.

30 A Chronicle..., II, p. 1075.

նպատակով, Հռոմի հանձնարարությամբ, միսիոներներից ամենապատրաստվածները և ազդեցիկները զրույցներ էին ունենում հայ բարձրաստիճան հոգևորականների, ներառյալ նաև կաթողիկոսների հետ։ Քարմելիթ Թիմասը «Հավատի պրոպագանդայի» պրեֆեկտ կարդինալ Լյուդովիկոսին ուղղված իր նամակում հետևյալն է գրում. «Նոր Ջուղայում ես հանդիպում ունեցա նորընտիր պատրիարք Մովսեսի հետ (խոսքը Մովսես Տաթևացի կաթողիկոսի մասին է.— Վ. Բ.) և համաձայն Ձեր հանձնարարության զրուցեցի կրոնական հարցերի շուրջը»[31]։

Պետք է ենթադրել, որ զրույցի ընթացքում Հռոմի ներկայացուցիչը չի սահմանափակվել լոկ կրոնական դոգմաների շուրջը խոսակցություններով, այլ աշխատել է շոշափել հայ կաթողիկոսի վերաբերմունքը Հռոմի և կաթոլիկ եկեղեցու նկատմամբ, գուցե և աշխատել է համոզել կաթողիկոսին ընդունել Պետրոսի աթոռի գերիշխանությունը։ Օգտվելով սեֆյան շահերի, հատկապես Աբբաս 1-ինի վերաբերմունքից դեպի Հռոմի պապը և կաթոլիկական երկրները, միսիոներները փորձում են համոզել շահերին, որ նրանք ճնշում գործ դնեն հայ կաթողիկոսների վրա, որպեսզի հպատակություն հայտնեն Հռոմին։

Այդ երևում է ավգուստինյան միաբանության միսիոներ Անտոնիո դե Գուվեայի հուշագրությունից. «...Շահին (Աբբաս 1-ին.—Վ. Բ.) դիմելով ասացի. այժմ, որ կրկին անգամ ինձ ուղարկում եք Եվրոպա, հրամայեցեք հայ պատրիարքին, որ ուղեկցի ինձ և մյուս պատրիարքների նման համբուրի Պապի ոտքերը և իր հպատակությունը հայտնի նրան։ Ի պատասխան շահը ասաց. Դուք գիտեք, որ իմ երկրում յուրաքանչյուր ոք ազատ է ապրելու այնպես, ինչպես ինքը կցանկանա, և դավանելու այն կրոնը, որը առավել մոտ է իր սրտին։ Հետևաբար ես չեմ կարող ստիպել հայ պատրիարքին, որպեսզի նա ուղեկցի ձեզ»[32]։

Շահը այլ պատասխան չէր էլ կարող տալ։ Հայերի կաթոլիկություն ընդունելը հակասում էր Իրանի պետական շահերին, որովհետև վերջինս շահագրգռված էր պահպանելու իր տիրապետությունը հայերի նկատմամբ, որոնց նա նայում էր թե որպես հարկատու հպատակների և թե առևտրական միջնորդների, որոնցից նա քաղում էր մեծամեծ օգուտներ[33]։ Նկատելով այդ, Նոր Ջուղայում քարմելիթ Դիոնիսիուսը զգուշացնում էր Հռոմին. «Կառավարությունը գտնում է, որ շահի հպատակների կաթոլիկ դառնալը հակասում է իրենց պետական շահերին։ Այս կարևոր հանգամանքը հաշվի չառնելու դեպքում կարող է ամեն ինչ կործանվել»[34]։ Սրան Ջոն Թադդեուսը ավելացնում էր. «Դուք չպետք է կարծեք, որ շահ Աբբասը (1-ը.—Վ. Բ.) մեզ թույլ կտա իր հպատակներին դարձնել քրիստոնյա, ընդհակառակը, նա առիթի դեպքում աշխատում է ստիպել հայ քրիստոնյաներին, ֆրանկներին և այլ ազգությունների պատկանող քրիստոնյաներին դառնալ մահմեդական»[35]։

---

[31] A Chronicle..., p. 319.

[32] نصر الله فلسفی، زندگانی... جلد سوّم، ص .68

[33] Տ. Հակոբյան, Հայերի պայքարը կաթոլիկական միսիաների ասիմիլյատորական ձգտումների դեմ Իրանում (17—18-րդ դարերում), Արևելագիտական ժողովածու, I, Երևան, 1960, էջ 269։

[34] A Chronicle..., II, p. 1072.

[35] Ibid, I, p. 165.

Այս հանգամանքը շուտով պարզ է դառնում նաև հենց իրեն, Անտոնիո դե Գուվեայի համար։ Երբ նա խնդրում է Աբբաս 1-ին, որպեսզի թույլ տա հայերին, վրացիներին և Իրանի այլազգի մյուս քրիստոնյաներին դարձնելու «ճշմարիտ քրիստոնյաներ», շահը անորոշ պատասխան է տալիս նրան և անմիջապես իր մոտ կանչում հայերի, ինչպես նաև մյուս քրիստոնյաների հոգևոր առաջնորդներին և բարեկամաբար հասկացնում, որ իր համար ցանկալի չէ, որ իր հպատակները ընդունեն կաթոլիկություն[36]։ Քրիստոնյաների նկատմամբ այսպիսի քաղաքականություն վարում էին ոչ միայն Աբբաս 1-ը, այլև հետագա սեֆևիները։

Այս ամենը հաշվի առնելով, բնականաբար, սեֆեյան կառավարությունը չէր կարող թույլ տալ, որ այնպիսի մի ազդեցիկ կազմակերպություն, ինչպես հայկական եկեղեցին էր, հարի կաթոլիկությանը և դառնա օտարահպատակ։ Դեռ ավելին. պատմական աղբյուրները մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ կառավարությունը հայ հոգևորականությանը օգտագործում էր Իրանում կաթոլիկների աճող ազդեցության դեմ պայքարելու համար։ Այս քաղաքականությունը մեծ հաջողությամբ հատկապես կիրառվում էր Նոր Ջուղայում, որտեղ կաթոլիկների դեմ բուռն ելույթների համար պարսկական կառավարությունը ոչ միայն ճնշում գործ չէր դնում հոգևորականության նկատմամբ, այլև ընդհակառակը վճռական պահերին միշտ բռնում էր նրա կողմը։

Միսիոներների դեմ պայքարում հայ հոգևորականությունը օգտագործում էր ամեն մի հնարավոր միջոց՝ նրանց քարոզչական աշխատանքը ձախողելու համար։ Օրինակ, նա արգելում է հայ պատանիներին սովորել կաթոլիկների դպրոցում[37], նզովքի ենթարկելու սպառնալիքով խոչընդոտում է հայերի և կաթոլիկների ամուսնությունը[38], կաշառում է տեղական իշխանություններին կառավարության մոտ ծանր մեղադրանքներով ամբաստանում է միսիոներներին ասելով, որ նրանց իսկական նպատակն է «լրտեսել զել և մուտս Պարսկաստանի և գրել զամենայն անցս երկրին առ թագաւորութիւնս Եւրոպիոյ»[39], քանդում է նրանց եկեղեցիները և այլն։ Շատ հաճախ միսիոներների նկատմամբ պարսից կառավարության զայրույթը հարուցելու համար հայ հոգևորականությունը հայտնում էր նրան, թե կաթոլիկների նպատակն է ոչ միայն դավանափոխ անել հայերին, այլև մահմեդականներին դարձնել քրիստոնյա։ Սա վերին աստիճանի ծանր մեղադրանք էր։ Անդրադառնալով այդ հարցին, միսիոներներից մեկը գրում էր, որ «դա բավական է, որ մեզ դուրս վռնդեն ոչ միայն Ջուղայից, այլև Իրանից»[40]։

Հայ հոգևորականության պայքարի միջոցներից մեկն էլ գաղափարական պայքարն էր։ Այդ առթիվ Լեոն նշում է, որ քարոզիչների դեմ կռվելու անհրաժեշտությունը ստիպեց հայ կղերականներին գրքեր շարադրել[41]։

Ջուղայի տպարանը լույս է ընծայում Աղեքսանդր վարդապետի «Գիրք, որ ասի վիճաբանական» աշխատությունը, և Հովհաննես Մրքուզ վարդապետի

---

[36] نصر الله فلسفی، زندگانی ... جلد سوم، ص. 231.

[37] A Chronicle..., I, p. 378.

[38] Ibid, I, p. 456.

[39] Հ. Տեր-Հովհաննեսյան, Պատմություն Նոր-Ջուղայի, հ. 2-րդ, Նոր-Ջուղա, 1880, էջ 266։

[40] A Chronicle..., II, p. 1075.

[41] Լեո, Հայկական տպագրություն, հատոր 1-ին, Թիֆլիս, 1901, էջ 250։

«Գիրք իսկապես համառոտ ճշմարիտ հաւատոյ»[42], իսկ Ամենափրկչյան վանքի թեմական առաջնորդ Ստեփանոս Ջուղայեցին գրում է «Գիրք հակաճառական ընդդեմ պապականաց» հեղինակությունը[43]։ Այս աշխատությունները անշուշտ որոշակի դեր են կատարել հայկական եկեղեցու սկզբունքները կաթոլիկների հարձակումներից պաշտպանելու գործում և օգնել են գաղութի հայությանը ղոհ չգնալու միսիոներների ասիմիլյատորական ախորժակին։

Սակայն հայ հոգևորականությունը ևս ուներ խոցելի տեղեր, որոնք միսիոներների կողմից օգտագործվում էին նրա դիմադրությունը ճնշելու համար։ Սերտորեն կապված լինելով առևտրական դասի հետ, հայ եկեղեցին չէր կարող հաշվի չնստել նրա շահերի հետ։ Այդ պատճառով միսիոներները շատ հաճախ դիմում էին առավել փորձված մեթոդի՝ ճնշում էին գործադրում հայ խոջայության վրա։ Հ. Քյուրդյանը իրավացիորեն նկատում է, որ «հանդիպելով հայկական եկեղեցու համառ դիմադրությանը, կաթոլիկ կղերի մեջ գաղափար էր ծնվել, թե մի գուցե հայերի հավատափոխությունը ավելի հեշտ կլիներ, եթե Հռոմն իր ազդեցությունը օգտագործեր ընդդեմ Եվրոպայում գտնվող հայ վաճառականների»[44]։ Այս մեթոդը մասամբ արդարացնում էր իրեն։ Երբ հայ հոգևորականությունը Նոր Ջուղայում ուժեղացնում էր իր հալածանքները միսիոներների դեմ, վերջիններս անմիջապես իրենց հովանավորող պետությունների և Հռոմի միջոցով պատասխան գործողություններ էին ծավալում հայ խոջայության դեմ։ Իսկ սա վնասներ չկրելու համար, հայ հոգևորականությունից պահանջում էր զուսպ լինել իրենց կրքերի մեջ։ Այսպես օրինակ, 1688 թ. Նոր Ջուղայում լուսավորչական հոգևորականության և ճիզվիտների մեջ մեծ խռովություն է ծագում։ Պայքարի գլուխ է կանգնում Ամենափրկչյան վանքի առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոսը, որը լրտեսության մեջ մեղադրելով միսիոներներին, շահից պահանջում է նրանց վտարել Նոր Ջուղայից։ Անսալով այդ բողոքին 1689 թ. շահը հրամայում է քանդել քարմելիթների եկեղեցին և Նոր Ջուղայից արտաքսել ճիզվիտներին։ Այս դեպքերի առթիվ անմիջապես գործին խառնվում են շահի պալատին մոտ կանգնած փորթուգալացի ներկայացուցիչները, որոնք Հնդկաստանում առևտուր անող խոջաներին սպառնում են՝ եթե ամենակարճ ժամկետում վերջ չտրվի միսիոներների հալածանքին, ապա իրենք համապատասխան միջոցներ ձեռք կառնեն, որպեսզի խոջաները Հնդկաստանում ենթարկվեն նույնանման հալածանքների[45]։ Այս նախազգուշացումը անմիջապես ունենում է իր հետևանքները։ Հայ հոգևորականությունը, խոջաների պահանջով, ստիպված է լինում միաժամանակ դադարեցնել իր թշնամական գործողությունները միսիոներների դեմ, որոնք մեծ հանդիսավորությամբ կրկին վերադառնում են Նոր Ջուղա։

Միակ ռեալ ուժը, որի վրա հենվելով միսիոներները դիմանում էին Նոր Ջուղայում և կարողանում էին ծավալել քարոզչական աշխատանք, կաթոլիկությունն ընդունած տեղացի հայերն էին, հատկապես նրանց ազդեցիկ ու

---

42 Նույնը, 1, էջ 249։

43 Ա. Երեմյան, Ս. Ամենափրկչյան վանքի թեմական առաջնորդները, Նոր Ջուղա, 1919, էջ 24։

44 Հ. Քյուրդյան, Ջուղայեցի Խոջա Նազար և իր դերդաստանը (առանձնատիպ), էջ 92։

45 A Chronicle.... I, p. p. 462—464.

հարուստ մասը, որից քարոզիչները ստանում էին լայն նյութական ու բարոյական աջակցություն։ Կաթոլիկ համայնքը Նոր Ջուղայում գլխավորում էր Շահրիմանյան հարուստ առևտրական ընտանիքը, որն իր ունեցվածքից մեծ բաժին էր հանում միսիոներներին։ Միայն քարմելիթների միաբանության քարոզիչներին նրա հատկացրած տարեկան նպաստը կազմում էր 500 սկուդի, չհաշված հասարակական բաղանիքից ստացված եկամուտների այն զգալի մասը, որը ևս նրանց էր տրամադրվում։ Այնպես, որ վերջիններիս բյուջեն լրիվ ինքնաբավ էր և այլևս կարիք չունեին Հռոմից նյութական օգնություն ստանալ[46]։ Բնական է, որ Շահրիմանյաններից ստացած նպաստների զգալի մասը քարոզիչներն օգտագործում էին «հոգիների որսը» առաջ տանելու համար։

Այս ընտանիքի քաղաքական օրիենտացիան ամբողջապես եվրոպական կաթոլիկական պետությունների կողմն էր։ Բնականաբար Շահրիմանյանների և առհասարակ Ջուղայի կաթոլիկ խոջաների օտար օրիենտացիան անցանկալի էր պարսկական կառավարության համար։ Սակայն ի նկատի առնելով նրանց մեծ դերը Իրանի առևտրական կապերի ամրապնդման գործում եվրոպական երկրների հետ, ինչպես նաև մեծապես օգտվելով նրանց առևտրի բերած եկամուտներից, պարսկական կառավարությունը համբերատար վերաբերմունք էր ցույց տալիս նրանց նկատմամբ։ Ավելին, Ջուղայի կաթոլիկ խոջաները նպաստում էին նաև իրանա-եվրոպական քաղաքական կապերի ամրապնդմանը, հատկապես հակաթուրքական դաշինք կնքելուն։

Այս բոլորով հանդերձ, ոչ մի երաշխիք չկար, որ պարսկական կառավարությունը միշտ միևնույն համբերատարությամբ կվերաբերվի կաթոլիկ խոջաներին։ Սեֆևյան իշխանությունների ցասմանը ենթարկվելու վտանգը միշտ էլ կար թե՛ կաթոլիկ քարոզիչների և թե նրանց հետևորդների համար։ Հռոմին տեղեկագրելով լուսավորչականների և կաթոլիկների միջև Նոր Ջուղայում 1694 թ. ծագած խռովությունների մասին, միսիոներները նշում էին, որ «խռովության ժամանակ հայ կաթոլիկները չէին համարձակվում նույնիսկ այցելել իրենց, որովհետև շահի գլխավոր կառավարիչը սպառնացել էր Խոջա Մարդարին (Շահրիմանյան.—Վ. Բ.), որ նա կզրկվի իր գլխից, եթե հայ-կաթոլիկները թեկուզ համարձակվեն խոսել ֆրանկների հետ։ Այսպիսով,—գանգատվում էր նա,—մենք ստիպված էինք միմյանց հետ կապ պահպանել նամակների միջոցով»[47]։

Եթե լուսավորչականների և կաթոլիկների պայքարում սեֆևյան կառավարությունը սովորաբար բռնում էր լուսավորչականների կողմը, ապա որպես կաթոլիկների պաշտպան հանդես էին գալիս եվրոպական կաթոլիկական պետությունները։ Կաթոլիկ խոջաներին ոգևորելու համար, նրանք, նույնիսկ, բարձր պատիվների էին արժանացնում նրանց։ Օրինակ, ի նկատի առնելով Շահրիմանյանների մեծ ծառայությունները Իրանում կաթոլիկության տարածման գործում, 1699 թ. Ավստրիայի կայսր Լեոպոլդ 1-ին Հաբսբուրգը հատուկ հրամանով կոմսության տիտղոս է շնորհում այդ ընտանիքին[48]։

---

[46] A Chronicle..., I, p. p. 457, 484, 500; II, p. p. 1078, 1080.

[47] A Chronicle..., I, p. 467.

[48] Սերոպ վարդապետ Ուղուրլեան, Պատմութիւն հայոց գաղթականութեան ի Լիվոռնոյ քաղաքի, Վենետիկ, 1891, էջ 301—302։

Պարզ է, որ միսիոներներին հովանավորող իսպանական ու ֆրանսիական թագավորներին, հաբսբուրգներին ու վենետիկյան Դոժին առաջին հերթին հետաքրքրում էր ոչ թե «հերձվածող» հայերի մեղապարտ հոգիների փրկության հոգսը, այլ Նոր Ջուղայի առևտրական կապիտալը ամբողջապես կաթոլիկական դավանանքի դարձնելը և եվրոպական առևտրական կապիտալի շահերի օգտին ծառայեցնելը։ Այդ կաթոլիկ պետություններից յուրաքանչյուրը աշխատում էր Ջուղայի առևտրական կապիտալը թեքել իր կողմը և այն օգտագործել եվրոպա-ասիական իր առևտրի ընդլայնման համար։ 17-րդ դարի 2-րդ կեսից սկսած այդ ուղղությամբ մեծ ակտիվություն է սկսում ցուցաբերել հատկապես ֆեոդալա-միապետական Ֆրանսիան, որի առևտրական կապիտալի շահերը պահանջում էին ակտիվ քաղաքականություն վարել արևելքի նկատմամբ[49]։

Ֆրանսիական կապիտալի շահը պահանջում էր, որ ջուղայահայ խոջաները անմիջական կապ ունենան Ֆրանսիայի հետ, արևելքից Ֆրանսիա բերեն իրենց ապրանքները և ֆրանսիական ապրանքներ արտահանեն։ Այսպիսի նպատակներ էին հետապնդում Նոր Ջուղայում ակտիվ գործունեություն ծավալած ֆրանսիական միսիոներները։ Իզուր չէ, որ նրանց գործունեությունը Իրանում և հատկապես Իրանի հայերի շրջանում մեծ անհանգստություն էր պատճառում Ֆրանսիայի մրցակիցներին՝ Անգլիային և Հոլանդիային, որոնք ոչ անհիմն կերպով ենթադրում էին, որ հանձին միսիոներների Իրան են թափանցում ֆրանսիական թագավորի գործակալները, ապահովելու համար ֆրանսիական առևտրական կապիտալի շահերը[50]։

Սակայն ինչպես Ֆրանսիայի, այնպես և եվրոպական մյուս պետությունների ու Հռոմի պապի ջանքերը՝ միսիոներների միջոցով հայությունից խլել և կաթոլիկության մեջ ներգրավել Նոր Ջուղայի գաղութը, նրա առևտրական կապիտալն ի սպաս դնել իրենց գաղութային քաղաքականության շահերին, ավարտվեցին կատարյալ անհաջողությամբ։ Գաղութը կուլ չգնաց և համառ պայքարի միջոցով պահպանեց իր ազգային դեմքն ու ազգային-կրոնական ինքնուրույնությունը։

Հանրագումարի բերելով գաղութում կաթոլիկ եկեղեցու կրած անհաջողության հիմնական պատճառները, կարելի է ասել հետևյալը։ Միսիոներների քարոզչական աշխատանքի ձախողման հիմնական պատճառը այն համառ դիմադրությունն էր, որ գաղութի բնակչության լայն խավերը, հավատարիմ մընալով իրենց ազգային տրադիցիաներին, անհաշտորեն մղեցին միսիոներների ասիմիլյատորական նկրտումների դեմ։ Այս հարցում անժխտելի է նաև հայ հոգևորականության կատարած դերը, որը միավորում էր գաղթավայրի բնակչությանը և պայքարի հանում միսիոներների ոտնձգությունների դեմ։ Առանց ժողովրդի լայն խավերի աջակցության, նա, անշուշտ, անզոր կլիներ դիմագրավել այդ ահավոր գրոհին։

Իրանահայ գաղութում եվրոպական կաթոլիկական պետությունների և Վատիկանի գործակալների կրած անհաջողության պատճառներից մեկն էլ տարբեր միաբանությունների փոխադարձ պայքարն էր ու մրցակցությունը։

---

[49] А. Рогинская, Очерки по истории Франции XVII—XIX вв., Москва, 1958, стр. 36.

[50] А. А. Зонненштраль-Пискорский, Международные торговые договоры Персии, Москва, 1931, стр. 48.

Անկասկած այդ պայքարում դրսևորվում էին եվրոպական պետությունների միջև գոյություն ունեցող հակասությունները։ Ավգուստինյան միաբանությանը պատկանող միսիոներները, որոնք օգտվում էին իսպանական թագավորի հովանավորությունից, իրենց համարում էին իրանահայերի միակ հովանավորողը, իսկ Վատիկանի և ֆրանսիական միապետության շահերը արտահայտող քարմելիթյան միաբանության անդամները պնդում էին, թե Իրանը հանդիսանում է բացառապես իրենց միաբանության գործունեության ասպարեզ[31]։ Անշուշտ այս երկու միաբանությունների միջև գոյություն ունեցող պայքարը հանդիսանում էր ֆրանս-իսպանական հակամարտության արդյունք։ Նույնանման հակասություններ և փոխադարձ պայքար գոյություն ունեին նաև այլ կաթոլիկական միաբանությունների միջև։

Այսպիսով, նկատի առնելով այն հանգամանքը, որ Իրանում եվրոպական պետությունների շահերի օգտին կապիտուլյացիոն ռեժիմի սահմանման գործում բացառիկ կարևոր դեր էին խաղում նաև կաթոլիկ եկեղեցին և նրա գործակալները, կարելի է ասել, որ իրանահայերի պայքարը ընդդեմ միսիոներների մյուս կողմից օբյեկտիվորեն ուղղված էր Իրանում արևմտաեվրոպական գաղութարարների էքսպանսիայի դեմ։

17-րդ դարում իրանահայ գաղութի պայքարը արևմտաեվրոպական պետությունների գործակալների՝ միսիոներների դեմ մի հարց է, որ սպասում է իր հետագա ուսումնասիրողներին։

В. А. Байбуртян

АРМЯНСКАЯ КОЛОНИЯ НОВОЙ ДЖУЛЬФЫ И ОРГАНИЗАЦИИ КАТОЛИЧЕСКИХ МИССИОНЕРОВ (XVII в.)

Резюме

Колониальная политика западноевропейских держав в отношении Ирана в XVII в. находила широкую поддержку католических миссионеров и Ватикана, которые играли роль своего рода авангарда западноевропейских колонизаторов в Иране.

Своей деятельностью католические миссионерские организации должны были подготовить почву для проникновения в Иран западноевропейского торгового капитала и установления в этой стране кабального режима капитуляций.

Армяне, составлявшие большинство христианского населения государства Сефевидов, были основным объектом деятельности миссионеров. В частности армянская колония—Новая Джульфа была важнейшим центром католической пропаганды в Иране. Обращением населения этой колонии в католичество западноевропейские державы и Ватикан стремились создать базу для распространения своего влияния в Сефевидском государстве.

[31] A Chronicle..., I, p. p. 265, 701.

Если армянская торговая буржуазия и духовенство, преследуя корыстные цели, нередко вступали в компромисс с миссионерами и этим облегчали их деятельность в колонии, то основная масса населения колонии последовательно вела непримиримую борьбу против ассимиляторских стремлений миссионеров для защиты своих национальных традиций и сохранения своей национальной самобытности. Объективно борьба эта была направлена и против экспансии в Иран западноевропейских колонизаторов.